ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 18 >> հունիսի 2013թվականի N 60 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ *N* 18/1 ՀԱՍՑԵԻ 400,0(ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ) ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՌՆԱԴԱՏՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵԼԲԵՐՏ ՀՐԱՆՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հելբերտ Հրանտի Եղիազարյանը դիմել է Գյումրու քաղաքապետին (դիմումը գրանցված է 17.05.2013թ Մ-2612), իրեն, որպես բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձի, բնակելի տուն կառուցելու նպատակով Գյումրի համայնքի տարածքում հողամաս հատկացնելու խնդրանքով:

Քաղաքացի Հելբերտ Եղիազարյանը, որպես բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձ (հիմք՝ վկայական N 1601՝ տրված 29.05.1995թ ՀՀ Դատախազության կողմից), չունենալով բնակարան Գյումրիում (Տեղեկանք N ԱՏ-14/11/2012-39-0043՝ տրված 16.11.2012թ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի սպասարկման գրասենյակի կողմից) ներկա պահին քաղաքացին հաշվառված է և բնակվում է ՀՀ Շիրակի մարզի Մայիսյան գյուղում, գյուղապետարանի կողմից տրամադրված տնակում, կարող է օգտվել <<Բռնադատվածների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ իր նախկին բնակության վայրում անհատական բնակելի տուն կառուցելու համար հողամաս ձեռք բերելու իրավունքից:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Բռնադատվածների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մարմաշենի խճուղի *N* 18/1 հասցեի 400,0(չորս հարյուր) քառ.մ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17042013-08-0021),որը չի մտնում Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, սեփականության իրավունքով անհատույց տրամադրել բռնադատվածի կարգավիճակ ունեցող, քաղաքացի Հելբերտ Հրանտի Եղիազարյանին՝ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Հելբերտ Եղիազարյանի հաշվին:

Կողմ (11) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**